

ՅՈՐԵԼԻՆԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

COMITÉ CENTRAL DU JUBILÉ DE L'ECOLE DES DAMES TEBROTZASSERE

1, Bld. du Nord, LE RAINCY (S. & O.)

1952 եւ 1953 տարիներու ընթացքին Գաղութահայութիւնը ամենուրեք պիտի տօնէ Դպրոցասէր Տիկնանց Վարժարանի 75ամեակը:

Իր կրթական գործունէութեամբ, Դպրոցասէրը անկասկած սահմանուած է կազմելու արեւմտահայ նորագոյն պատմութեան ամենէն լուսաւոր էջերէն մէկը:

«Դպրոցասէր» անունին յիշատակումն իսկ այլեւս բաւական է, որպէսզի իւրաքանչիւր Հայու մտքին ու սրտին մէջ կերտուի ան յաղթական կամարի մը խորհուրդով, ինչպէս նաեւ թելադրական բազառիկ ուժականութեամբ մը՝ պատկերացնէ իր կատարած ու այսուհետեւ ալ դեռ կատարելիք ազգանուէր առաքելութիւնը:

«Դպրոցասէր» անունը այլեւս համագոր դարձած է զրօշակի մը, որ բանուած է շքեղ փառքովը մէկէ աւելի շահուած հակառակմարտներու: Շահուած՝ ի զին զոհաբերութեանց եւ նուիրումի անհաշիւ գումարի մը, զոր մատուցին «փափկասուն տիկնայք Հայոց աշխարհի», որպէսզի հայ կեանքը որոշադրող յարանորոգ պայմաններուն ընդառաջեն, արժանաւորապէս, իրենց յաջորդական սերունդները:

Ու իր հիմնարկութենէն մինչեւ առաջին համաշխարհային պատերազմը, հարիւրամիլիոն վարժուհիներ, Պոլսէն մինչեւ գաւառի ամենահեռաւոր անկիւններ, տրամադրուեցան առաքելութեան մը որ Դպրոցասէրէն քաղուած մտքի ու սրտի լոյսը ջամբելն էր՝ ի խնդիր արեւաշող վաղորդայններու:

Զինադադարէն յետոյ, պահելով հանդերձ Վարժուհիների բաժինը, Դպրոցասէրը իր զոհերը լայն բացաւ թրքական եղեռնէն հրաշքով ազատած հարիւրաւոր որբուհիներու առջեւ, որոնց հետ, քանի մը տարի վերջ, Սելանիկ ու Մարսէյլ մնալէ յետոյ, 1928ին եկաւ վերջնականապէս հաստատուիլ Փարիզի մէկ արուարձանին՝ Ռէնսիի մէջ:

Այժմ քանի մը տարիէ ի վեր, իր վերանորոգուած շէնքին մէջ, Դպրոցասէրը կը շարունակէ իր առաքելութիւնը երկրորդական վարժարանի ծրագրով եւ զինշրջովի ու ցերեկեայ ԵՕ աշակերտուհիներով:

Իր 75ամեակին առիթով քանի մը ամիս առաջ հանրութեան ուղղած իր կոչը, Դպրոցասէր Տիկնանց Ընկերութիւնը կը վերջացնէր հետեւեալ յանձնառութեամբ.

«Այսպէս, Դպրոցասէրը, իր աչքերը յառած դէպի լուսապայծառ ապագան, անշէջ խանդավառութեամբ պիտի շարունակէ իր համբան՝ Հայութեան շնորհիւ եւ Հայութեան համար»:

Այս յանձնառութիւնը, որ կ'առնուի Հայութեան համար, կը դնէ այս վերջինը իր կարգին յանձնառութեան մը առջեւ: Այսինքն՝ շրջապատել Դպրոցասէրը գուրգուրոտ հոգածութեամբ ու անսակարկելի նուիրաբերութեամբ:

Որպէսզի անիկա ո՛չ միայն շարունակէ իր առաքելութիւնը, այլ նաեւ Գաղութահայութենէն ներս հետզհետէ աւելի ծաւալուն, աւելի ներուժ եւ աւելի խորարմատ դարձնէ զայն:

Եւ աւելի քան վստահ ենք որ, ինչպէս Փարիզահայութիւնը Մայիս 4ին, նոյնպէս եւ Ֆրանսայի միւս բաղադրներուն եւ բոլոր գաղութներու Հայութիւնը պիտի փութայ բերել զնահապտութեան ու յանձնառութեան այս ընծայականը յորեւի՜նական փառաշուք տօնակատարութիւններով:

Դիւան՝ Դ. Տ. Վ. ի 75 ամեակին Յորեւի՜նական Կեդր. Յանձնախումբի

Ատենադպիր
ՊԵՏՐՈՍ ԶՍՐՈՅԵԱՆ

Ատենապետներ
ՎՍՀԷ ՅՐԷՆԿԵԱՆ, ԱՌԱՔԵԼ ԶՍՔՐԵԱՆ
Գանձապահ
ՊՅՂՈՍ ՅՐԷՆԿԵԱՆ

1952-ի «ՍԻՈՆ» ԿԸ ՆՈՒԻՐԷ

Ծրուագիւմէն

Բար. Տիր. Վահան Սրկ. Գալֆաեան՝ Անթիլիասի Դպրեկանուց :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Քանի մը ամիս առաջ խաղաղութեան Համաշխարհային խորհուրդը կող ուղղեց բոլոր երկիրներու ժողովուրդներուն, 1952-ին արժանաւորապէս տօնելու համար

ԻՊՆ ՍԻՆՍՅԻ 1000 ամեայ

ՆԻՔՈԼԱ Վ. ԿՈԿՈԼԻ 100 ամեայ

ԼԷՈՆԱՐՏՈ ՏԱ ՎԻՆԶԻԻ 500 ամեայ

ՎԻՔԹՈՐ ՀԻԻԿՈՅԻ 150 ամեայ յորեկեանները :

Ռախտութեամբ կ'ողջունենք այս որոշումը, որովհետեւ համազուած ենք որ մշակութային այս հանդիսութիւնները պիտի ըլլան առիթ մը միջազգային արժէքներու լայն ծանօթացումին, պիտի ամրացնեն ժողովուրդներու միջեւ բարեկամութիւնն ու համագործակցութիւնը. Պիտի նպաստեն մանաւանդ միջազգային խաղաղութեան ազնիւ դատին :

Այս մտադրութեամբ Պէյրութի «Գրական Շրջանակ»ը ձեռնարկած է մշակոյթի այս չորս վարպետներուն յորեկեանական տօնակատարութեան :

Վստահ ենք թէ սփիւռքի բոլոր հայրենասէր կազմակերպութիւններն ալ, իրենց կարելիութեան ներսէն չափով, պիտի ընդառաջեն խաղաղութեան Համաշխարհային խորհուրդի կոչին :

Այս առիթով կը յայտնենք մեր պատրաստակամութիւնը, նիւթերու եւ թղթակցութիւններու փոխանակութեան համար :

Ի դիմաց «Գրական Շրջանակ»ի

ԱՐՄԷՆ ԴԱՐԵԱՆ ԴԵՂԱՄ Լ. ՍԵՒԱՆ

Թղթակցութեան հասցէ.

Գ. Սեւան, նամակատու փ թիւ 1110

ՊԷՅՐՈՒԹ — ԼԻԲԱՆԱՆ

ՄԱՄԼՈՅ ՏԱԿ Է

Յ. ՕՇԱԿԱՆԻ

ՀԱՄԱՊԱՏԿԵՐ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Գ. ՀԱՏՈՐ

ԻՐԱՊԱՇՏՆԵՐԸ

(Մոսկ, Արփիար Արփիարեան, Լեւոն Բաշալեան, Գրիգոր Զօհրապ, Հրանդ, Տիգրան Կամսարտեան, Սիպիլ, Հրանդ Ասատուր, Արեակ Զօպանեան :